ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«25» մայիսի 2019 թվականի № 86-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2019 թվականի ապրիլի 17-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 19 փորձաքննության դրական եզրակացությունը, հաշվի առնելով «ՆՅՈՒ ԻԴԱ» ՍՊ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 10, 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ 14 գրությունները և Ընդերքի գործակալության պետիի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՆՅՈՒ ԻԴԱ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/599 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/87 և թիվ 2/87 հորատանցքերից արդյունաբերական (շշալցում) նպատակով 4,9 լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի և ուղեկից բաղադրիչի (ազատ ածխաթթու գազի) կորզման արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 154526,4մ³ ածխաթթվային հանքային ջուր և 140,8 տոննա ածխաթթու գազ:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -599 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի կողմից փորձաքննություն անցած նախագիծ),

4) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հաշվառումը՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

4/25/2019

X

VERIFIED OCSP 4/25/2019 18:08:17 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533